


«ԱՇԽԱՏԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



Հանուն մարդու կյանքի որակի շարունակական բարելավման



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....3

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ8

ՆՊԱՏԱԿ 1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ8

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ13

ՆՊԱՏԱԿ 2. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ13

ՆՊԱՏԱԿ 3. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՄԵԾԱՑՈՒՄ14

ՆՊԱՏԱԿ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ.....17

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....18

ՆՊԱՏԱԿ 5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ.....18

ԱԱՊ Առևտրաարդյունաբերության պալատ

ԱԺ	Ազգայի Ժողով
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԶՊԳ	Զբաղվածության պետական գործակալություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԳՀՄ	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
ՆՄՄԿ	Նախնական և միջին մասնագիտական կրթություն
ՆՄՄԿՈՒ	Նախնական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն

Ռազմավարության նպատակը, սկզբունքները և միջոցառումները

ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրով արժանապատիվ աշխատանքը և անհատական ջանքը աղքատության հաղթահարման և ներառական տնտեսական զարգացման առանցքում են: Ընդ այդմ՝ կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդումը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համար պահանջվող կարողությունների զարգացումը, գիտելիքահենք տնտեսական համակարգի ձևավորումը կառավարության գործունեության հիմնական ուղղություններից են: Բացի այդ՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունը ենթադրում է նոր որակի աշխատուժի անհրաժեշտություն և ավանդական ճյուղերին այլընտրանք համարվող ոլորտների և տարածքային համաչափ զարգացում, ինչը պահանջում է աշխատաշուկայի նոր քաղաքականության մշակում: Նոր քաղաքականության ձևավորման անհրաժեշտությունը նաև պայմանավորված է աշխատաշուկան բնութագրող թվային ցուցանիշներով, որոնք բերված են ստորև:

Համաձայն պաշտոնական տվյալների (սախնական)՝ 2018 թ. դրությամբ Հայաստանում աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 68%-ը, որից տնտեսապես ակտիվ է բնակչության 57%-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ գործազուրկ է 20.4%-ը: Հայաստանի այս ցուցանիշն ամենաբարձրն է ԵԱՏՄ երկրների շրջանում, ինչպես նաև հարևան երկրների հետ համեմատելիս: Ընդ որում, գործազուրկների մեջ 15-34 տարեկան երիտասարդների՝ մասնաբաժինը 45 % է: Աշխատանքային ռեսուրսների 43%-ը տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունն է: Այս խմբում մեծ թիվ են կազմում կանայք, որոնց 38%-ը տնային տնտեսությունում ծանրաբեռնվածության, երեխայի կամ տան անդամի խնամքով զբաղվելու պատճառով չեն կարողանում աշխատել, ինչպես նաև անձինք, ովքեր հուսահատվել են և այլևս չեն հավատում, թե աշխատանք կգտնեն, ուստի չեն փնտրում: Առկա տվյալների վերլուծությունը փաստում է, որ Հայաստանում, ինչպես այլ զարգացող երկրներում, խնդիր է ինչպես ցիկլիկ, այնպես էլ կառուցվածքային գործազրկությունը:

Գործազրկության և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության բարձր տեսակարար կշիռների բերված թվերը վեր են հանում հետևյալ մտահոգությունները.

1. Հայաստանում 2013 թ. սկսած արձանագրվել է տնտեսական աճի ոչ շատ ցածր ցուցանիշ, այդուհանդերձ աճը անբավարար չափով է զուգակցվել նոր աշխատատեղերի ստեղծմամբ:
2. Զբաղվածության ոլորտը կամ առավել լայն իմաստով՝ աշխատաշուկայի քաղաքականության իրականացումը, վերջին տարիների ընթացքում պատշաճ ուշադրության չի արժանացել: Առկա է ոլորտը բնութագրող ցուցանիշների բաց կամ ցուցանիշներ, որոնք ամբողջական չեն, ինչպես օրինակ՝ աշխատուժի պահանջարկի մասին տեղեկատվությունը, ինչը լուրջ խնդիրներ է ստեղծում պետական քաղաքականություն մշակելիս:
3. Զբաղվածության պետական ծրագրերը կա՛մ գրավիչ չեն, կա՛մ դրանց մասին իրազեկվածության մակարդակը ցածր է: Բացի այդ՝ առկա ծրագրերը մեծամասամբ թիրախավորում են սոցիալապես խոցելի խմբերին, մինչդեռ այս առումով պետությունը պիտի սահմանի նաև այլ առաջնահերթություններ,
4. Գործազրկության նվազեցման գործում կարևոր դերակատարություն ունի հատկապես կրթության ոլորտը: Ներկայումս խզված է կրթություն-աշխատաշուկա կապը, մինչդեռ որակյալ կրթությունն ունակ է ոչ միայն լավ աշխատող, այլև լավ գործատու պատրաստելու, ինչպես օրինակ՝ ձեռներեցության հմտությունների խթանման միջոցով ՓՄՁ ոլորտի զարգացմանը նպաստելը և այլն:

¹ Տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2018թ. իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտությունն է:

Կառավարության ծրագրում ուրվագծված խնդիրների լուծման հրամայականը նպաստել է «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության ստեղծմանը, որը միտված է.

Մարդկային կապիտալի զարգացման,
Զբաղվածության խթանման և
Ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցով ապահովելու

մարդու կյանքի որակի շարունակական բարելավում՝
աշխատանքի և մասնագիտական ինքնաիրացման
ճանապարհով:

Ռազմավարության շրջանակներում նախանշվում են ռազմավարական այն առաջնահերթությունները, որոնց ուղղությամբ պետությունը, ի կատարումն ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրի, մինչև 2023 թ. համակարգված և փաստահենք քաղաքականություն է իրականացնելու՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**Մասնակցություն ու
ներգրավվածություն**

Բոլոր շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ քաղաքացիները ներգրավված են ու մասնակցում են աշխատաշուկայի քաղաքականության մշակման գործընթացին:

Թափանցիկություն

Որոշումների ընդունման գործընթացը թափանցիկ է և կանխատեսելի բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Մշտադիտարկում և գնահատում

Մշակվող քաղաքականություններն ունեն չափելի թիրախներ, կատարողականի գնահատման ցուցանիշներ, որոնք մշտադիտարկվում են և գնահատվում:

Հաշվետվողականություն

Հանրությանը պարբերաբար ներկայացվում է կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Ճկունություն

Միաժամանակ ապահովվում է աշխատաշուկայի ճկունությունը և պաշտպանությունը:

Նորարակական մոտեցումներ

Կիրառվում են խնդիրների լուծման նոր և արդյունավետ լուծումներ:

Պատասխանատվություն	Որոշում կայացնողները պատասխանատու են իրենց կայացրած որոշումների և դրանց իրագործման համար:
Իրավունքի առաջնայնություն	Որոշումների հիմքում ընկած է մարդու իրավունքների առաջնայնության սկզբունքը, մշակվող քաղաքականությունները մարդակենտրոն են:
Կայունություն	Ապագա սերունդների կարիքներն ու զարգացման հնարավորությունները ներառված են մշակվող քաղաքականության հիմքում:
Երիտասարդամետ քաղաքականության առաջնայնություն	Առաջնային է երիտասարդ մասնագետների՝ աշխատաշուկա մուտքի ապահովումը:

Ռազմավարության առջև դրված նպատակներն են.

- **Մարդկային կապիտալի զարգացում**
 1. Կրթական գործընթացում մասնավոր հատվածի արդյունավետ ներգրավվածությամբ որակյալ կրթության ապահովում և երիտասարդների մրցունակության բարձրացում
- **Զբաղվածության խթանում**
 2. Զբաղվածության ոլորտի ծառայությունների որակի բարձրացում
 3. Աշխատաշուկայի ծածկույթի մեծացում
 4. Աշխատանքային պայմանների և հարաբերությունների շարունակական բարելավում
- **Ինստիտուցիոնալ բարեփոխումներ**
 5. Զբաղվածության ոլորտի քաղաքականությունների մշակման ինստիտուցիոնալ արդիականացում

Ռազմավարության իրականացումը, կառավարումը և մշտադիտարկումը

Սույն ռազմավարությունը սահմանում է զբաղվածության ոլորտի բարեփոխումների առաջնահերթությունները, ինչը հնարավորություն է տալիս համակարգված և ներդաշնակ կերպով իրականացնելու ոլորտին առնչվող ծրագրերը:

«Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության իրականացման աշխատանքային խմբի² կողմից հավանության արժանանալուց հետո յուրաքանչյուր գլխադասային գերատեսչություն սկսելու է համակարգել իրենց վերապահված միջոցառումների իրականացումը: Ռազմավարության արդյունավետությունը գնահատելու նպատակով յուրաքանչյուր միջոցառման համար սահմանված են պատասխանատու գերատեսչություններ: Վերջիններս մեկամսյա ժամկետում սահմանելու են միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ ըստ առաջնահերթության: Յուրաքանչյուր միջոցառման համար սահմանվել են կատարողականի գնահատման ցուցիչներ և թիրախային ցուցանիշներ: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ գլխադասային գերատեսչությունը համակարգող փոխվարչապետի գրասենյակ է ներկայացնելու միջոցառումների իրականացման ընթացքի մշտադիտարկման արդյունքները, որոնք քննարկվելու են «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության պատասխանատու աշխատանքային խմբում: Յուրաքանչյուր տարվա ավարտին ամփոփվելու և հանրայնացվելու են կատարված աշխատանքների արդյունքները: Ռազմավարության մեկնարկից երկու տարի անց՝ 2021 թ. ռազմավարությունն ամբողջապես գնահատվելու է և ըստ այդմ՝ վերանայվելու:

² Աշխատանքային խումբը ստեղծվել է ՀՀ փոխվարչապետի՝ 2019 թ. ապրիլի 26-ի N 230-Ա որոշմամբ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Խնդիր 1. Կրթության ինստիտուցիոնալ և բովանդակային արդիականացում

Կրթության բոլոր մակարդակների և աշխատաշուկայի միջև կապը թույլ է, ինչը հանգեցնում է կառուցվածքային գործազրկության և թերզբաղվածության: Համաձայն հետազոտությունների³ 18-30 տարեկան երիտասարդ աշխատողների միայն 54%-ն է զբաղված այնպիսի աշխատանքով, որը համապատասխանում է իր կրթական մակարդակին⁴: ՆՄՄԿՈՒ և բուհերի շրջանավարտների միայն 41%-ն է կարծում, որ ստացված տեսական գիտելիքները համապատասխանում են իրենց աշխատանքի պահանջներին, և 43%-ն է կարծում, որ ստացված գործնական մասնագիտական հմտությունները համապատասխանում են աշխատանքի պահանջներին:

Մեկ այլ հետազոտության⁵ տվյալներով՝ ուսանողների 86%-ը նշում է, որ ուսումնառման ավարտելուց հետո աշխատանքային գործունեություն իրականացնելու համար կարիք կունենա լրացուցիչ վերապատրաստման: Մինևույն ժամանակ, դասախոսների միայն 46%-ին է հաջողվում ուսումնական ծրագրերի մշակման ժամանակ հաշվի առնել աշխատաշուկայի պահանջները: Գործատուների շրջանում անցկացված հարցման արդյունքներով՝ 78%-ը երիտասարդ մասնագետի աշխատանքի ընդունելիս առնչվում է վերջինիս աշխատանքային փորձի և գործնական կարողությունների պակասի հետ: Արդյունքում՝ երիտասարդների 33%-ն իր աշխատանքի համար կա՛մ գերկրթված է, կա՛մ թերկրթված:⁶ Ուստի առաջարկվում է համապատասխանեցնել կրթական չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերն աշխատաշուկայի ժամանակակից և առաջանցիկ պահանջներին:

Գործողություն 1.1. Մասնագիտությունների ցանկի վերանայում և կրթական ծրագրերի արդիականացում

Գործողություն 1.2. Կրթական ծրագրերի ներկայացման ազգային հարթակի ստեղծում

Գործողություն 1.3. Ուսանողների հորիզոնական մոբիլությանն ուղղված նախաձեռնությունների մշակում և փորձնական իրագործում

Գործողություն 1.4. Մասնագիտական կրթության համակարգում հեռավար կրթության համակարգի և ընտրված մասնագիտություններով կրթական մոդուլների մշակում և ներդրում

³ Մեյլ դը չիլդրեն, 2019, «Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և զենդերազգային հետազոտություն»

⁴ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 15-29 տարեկանների դեպքում նույն ցուցանիշը կազմում է 81,8%:

⁵ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2019, «ՀՀ աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում ծրագրի թեմայով աշխատանքների կատարման հաշվետվություն»

⁶ ILO, 2014, Labor market transition for young women and men in Armenia

Հանրակրթությունում մասնագիտական կողմնորոշումը օգնում է ձևավորել մասնագիտությունների, աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի մասին հստակ պատկերացում, հասկանալ սեփական նախասիրությունները և գնահատել կարողությունները, ինչի արդյունքում նպաստում է կրթություն-աշխատաշուկա սահուն անցմանը:

2012 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգով» հիմք է դրվել կարիերայի ուղղորդման գործող համակարգին, որի նպատակն անձի մասնագիտական ինքնորոշման և կարիերայի ուղղորդման հնարավորությունների ստեղծումն է: Արդյունքում ՀՀ մի շարք դպրոցներում ներդրվել են կարիերայի ուղղորդման դասընթացներ, որոնց մշտադիտարկման ցուցանիշները վկայում են դրանց արդյունավետության մասին:⁷ Այդուհանդերձ, հաջողված մոդելները չեն ներդրվել բոլոր դպրոցներում, ինչը նախատեսված է եղել հայեցակարգով:

Գործողություն 1.5. Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի համատարած ներդրում

Գործողություն 1.6. Կրթության դերի վերարժեքմանն ուղղված սոցիալական արշավներ

Կրթության ընթացքում հասարակության սոցիալ-տնտեսական կյանքին մասնակցելու, մարդկային և սոցիալական կապիտալ ձևավորելու և աշխատաշուկային ծանոթանալու արդյունավետ միջոցներից է կամավորությունը: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2018թ. տվյալների՝ Հայաստանում 15-29 տարեկան երիտասարդների 18.8%-ն իրականացրել է կամավոր աշխատանք: Մեկ այլ հետազոտության⁸ տվյալներով՝ ուսանողների միայն 5%-ն է ուսումը համատեղել կամավորական աշխատանքի հետ:

ՀՀ կառավարությունը 2017 թ. մարտի 23-ի նիստի N 12 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգին, սակայն ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր չեն ընդունվել: Արդյունքում մի շարք խնդիրներ դեռևս լուծված չեն, այդ թվում՝ կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելը, կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և այլն:

Գործողություն 1.7. Կամավորության ինստիտուտի զարգացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների մշակում և ներդրում

Խնդիր 2. Գործատուների արդյունավետ ներգրավվածություն մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացներում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2017 թ. դրությամբ շրջանավարտների 44%-ն ընդունվել է բուհ, իսկ ՆՄՄԿՈ համակարգ՝ 25%-ը: Նշված տվյալները վերլուծելու համար անհրաժեշտ է դիտարկել առաջին հերթին տնտեսության կառուցվածքը՝ այն համադրելով ՆՄՄԿՈ և բուհական կրթության նպատակների հետ, ինչը դարձյալ բախվում է աշխատաշուկայի առաջարկ-պահանջարկ խնդրին: Արդյունքում աշխատաշուկայում առնչվում ենք գերկրթվածության երևույթի հետ, որը հանգեցնում է թերգրավածության այն

⁷ Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն, 2017, Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետությունը գնահատող սոցիոլոգիական հետազոտություն

⁸ Մեյվ դը չիլդրեն, 2019, «Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և զենդերազգային հետազոտություն»

առումով, որ բուհի շրջանավարտները գտնում են այնպիսի աշխատանք, որն առավել համապատասխան է ՆՄՄԿՈւ որակավորմանը: Մյուս կողմից էլ՝ ներկայումս ՆՄՄԿՈւ-բուհ ընտրությունը պայմանավորվում է ոչ այնքան դիմորդի նախասիրություններով և հարմար աշխատանք գտնելու հեռանկարներով, որքան սոցիալական հնարավորություններով: Վերոնշյալ հանգամանքների պատճառով աշխատաշուկայի աղճատում է տեղի ունենում: Խնդրի լուծման տարբերակներից առանցքայինը ՆՄՄԿՈւ հաստատությունների ուսման որակի ու հեղինակության բարձրացումն է, ինչը հնարավոր կլինի միայն պետություն-կրթական հաստատություն-մասնավոր ընկերություն համագործակցության սերտացմամբ:

Գործողություն 2.1. Պետական խթանների համակարգի ձևավորում, այդ թվում՝ համագործակցության գերազանցության գնահատման միջոցով, և կիրարկում ՆՄՄԿՈՒ համակարգում կրթության գործընթացին գործատուների արդյունավետ ներգրավումն ապահովելու համար

Գործողություն 2.2. Որակավորումների ոլորտային շրջանակների մշակման գործընթացում գործատուների իրական մասնակցության ապահովում

Գործողություն 2.3. Մասնավոր հատվածի ոլորտային միավորումների ձևավորման միջոցով ընտրված կրթական և հմտությունների զարգացման նպատակային ծրագրերի իրագործում

Ակադեմիական միջավայրում գիտահետազոտական աշխատանքների ստեղծման հիմքում ընկած է մի կողմից գիտական նորույթի ստեղծման, մյուս կողմից էլ՝ ստեղծված արդյունքի կիրառելիության և արդիականության ապահովման խնդիրը: Նույնը վերաբերում է բուհական համակարգում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին: Ուսանողները և իրենց գիտական ղեկավարները ազատ են գիտական աշխատանքի թեմայի ընտրության հարցում: Այդուհանդերձ, քանի որ կառավարության խնդիրներից է նաև պետություն-գիտական հանրույթ կապի ապահովումը և գիտական գործունեության արդյունքների կիրառումը պետության զարգացման համար, ուստի կարիք կա նաև որոշ գիտական թեմաներով պետական պատվերի իջեցման կամ մասնավոր ընկերությունների հետ համագործակցության: Ընդ որում՝ հստակ թեմաներով աշխատանքների ստեղծումը լինելու է կամավոր, սակայն պատվիրատուի կողմից որոշակի աջակցություն է տրվելու, ինչպես օրինակ՝ օժանդակություն տվյալների հավաքագրման գործընթացում և այլն:

Պետության կողմից նման փորձ արդեն առկա է «Մանուկյան Սիմոն» հետազոտական հիմնադրամի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Հայաստանի գործատուների հանրապետական միությունը ևս նման ծրագրեր է իրականացրել մի շարք բուհերի հետ: Առկա փորձի վերլուծությունը կարող է մոդելի ընդլայնման հիմք դառնալ:

Բուհերի կողմից կիրառական արդյունքի ստեղծման միջոցներից է նաև թեմատիկ փորձարարական լաբերի ստեղծումը՝ միջբուհական սերտ համագործակցության և միջազգային լավագույն փորձի տեղայնացման միջոցով:

Գործողություն 2.4. Բուհերին հետազոտական աշխատանքների և ծառայությունների պատվերի ինստիտուտի կայացման համար խթանների համակարգի ձևավորում և համակարգում

Գործողություն 2.5. Միջբուհական և միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբերի ստեղծում և ծրագրերի իրագործում

Ներկայումս կրթաթոշակների տրամադրման համակարգի տրամաբանությունը պետության համար առաջնահերթ համարվող ուղղություններով լավագույն առաջադիմություն ունեցող ուսանողների խրախուսումն է, աշխատաշուկայի առաջարկի ու պահանջարկի համակշռումը: Այդուհանդերձ, աշխատաշուկայի պահանջարկի մասին համապարփակ տվյալների բացակայությունը խնդրահարույց է դարձնում կայացվող որոշումների արդյունավետությունը: Բացի այդ՝ ուսումնառության ընթացքում կամ դրա ավարտից հետո պետությունը որևէ առնչություն չի ունենում կրթաթոշակատուների հետ, մինչդեռ կրթաթոշակատուի և պետության կողմից որոշակի պարտականությունների ստանձնումը, ինչպես օրինակ՝ ուսումնառության ընթացքում պետության համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներով հետազոտությունների իրականացում, հանրային նշանակություն ունեցող ծրագրերում կամավոր հիմունքներով ներգրավում, պետական մարմիններում պրակտիկայի միջոցով ստացած տեսական գիտելիքների ամրապնդում և պետության համար հավելյալ արժեքի ստեղծումը, ավելի կմեծացնեն պետության կողմից մարդկային կապիտալի զարգացման մեջ ներդրվող գումարի արդյունավետությունը, ինչպես նաև ուսանողի մոտ կձևավորեն աշխատաշուկայի կողմից պահանջված հմտություններ և կարողություններ: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել պետության կողմից կրթաթոշակների տրամադրման տրամաբանությունը՝ այն դարձնելով ավելի փաստահենք և արդյունավետ: Միաժամանակ, մասնավոր հատվածը կրթաթոշակների տրամադրման միջոցով հնարավորություն կունենա նպաստելու իր կողմից պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստմանը:

Գործողություն 2.6. Պետական կրթաթոշակների տրամադրման համակարգի արդիականացում և մասնագիտական աճի ու հմտությունների զարգացման պետական-մասնավոր կրթաթոշակային հիմնադրամի ձևավորում

Բուհերում ստացած տեսական գիտելիքի գործնական ամրապնդումը ապահովվում է նաև մասնագիտական պրակտիկայի միջոցով: Երիտասարդների 26.6%-ն աշխատաշուկայում ավելի լավ հնարավորություն ձեռք բերելու համար նշում է, որ պրակտիկայի կարիք ունի:⁹ Միննույն ժամանակ, նույն հետազոտության տվյալներով՝ առկա կարճաժամկետ ուսումնական պարտադիր պրակտիկաները սովորաբար չեն ծառայում իրենց նպատակին:

Ուսումնառության տարիներին աշխատում է ուսանողների միայն 11.5%ը: Գործազուրկ շրջանավարտների 93%-ը չի աշխատել նաև ուսումնառության տարիներին: Մեկ այլ հետազոտության¹⁰ համաձայն՝ ուսանողների 64%-ը միայն սովորում է և չի աշխատում: Աշխատողների 45%-ը ձգտում է աշխատել աշխատանքային փորձ ունենալու համար: Միննույն ժամանակ շրջանավարտները ևս դժվարությունների են քախվում աշխատանք գտնելիս, որոնցից գլխավորն աշխատանքային փորձի բացակայությունն է:¹¹

⁹ Մեյվ դը չիլդրեն, 2019, «Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և զենդերազգային հետազոտություն»

¹⁰ Մեյվ դը չիլդրեն, 2019, «Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և զենդերազգային հետազոտություն»

¹¹ ILO, 2014, Labor market transition for young women and men in Armenia

2018 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ առաջին փոխվարչապետի N 439-Ն որոշմամբ սահմանվել է պետական կառավարման մարմիններում փորձնակ գրանցելու կարգը, որը հնարավորություն է տալիս փորձնակության տարիները համարել հանրային ծառայության ստաժ: Նոր կարգը դեռևս ամբողջությամբ չի գործարկվում: Մինևույն ժամանակ, առկա հիմունքներով համալսարանում սովորողների համար փորձնակության սույն կարգը գործող սահմանափակումներով կարող է որոշ խնդիրներ առաջացնել, ուստի կարիք կա նաև մշակելու հատկապես բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար փորձնակության նոր մոդել, որը հնարավորություն կտա ամրապնդելու ստացված գիտելիքները: Մոդելի հաջողության պարագայում համապատասխան օրենսդրական կարգավորումների միջոցով այն կարող է կիրառվել նաև մասնավոր ընկերությունների կողմից:

Գործողություն 2.7. Մասնագիտական պրակտիկայի և փորձնակության մոդելների վերանայում և ներդրում

Հարափոփոխ միջավայրում տնտեսության մարտահրավերներից մեկը աշխատաշուկայի կողմից մշտապես նոր հմտություններ և գիտելիք պահանջելն է, ինչը դժվար է ապահովել միայն ֆորմալ կրթական համակարգի միջոցով: Այս առումով կարևորվում է ոչ ֆորմալ և հատկապես հարատև կրթության գաղափարի իրականացումը, ինչը հնարավորություն է տալիս անձին մշտապես զարգացնելու իր մարդկային կապիտալը՝ հետ չմնալու աշխատաշուկայի պահանջներից: Այսօր Հայաստանում հարատև կրթության մշակույթը չի արմատավորվել, մինչդեռ տնտեսության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները պահանջում են վերապատրաստման ծրագրերի ավելացում: Քանի որ ՆՄՄԿՈՒ հաստատություններն ունեն համապատասխան պայմանները, ուստի հնարավոր է օգտագործել առկա ռեսուրսը՝ ֆորմալ կրթությունից զատ նաև որակյալ վերամասնագիտացման հնարավորությունների ընձեռման նպատակով: Սա տնտեսությունից եկող ազդանշաններին արագ արձագանքելու հնարավորություն կընձեռի: Բացի այդ՝ վերապատրաստման առկա հնարավորությունները քարտեզագրելու միջոցով հնարավոր է հասկանալ ֆորմալ կրթության բացերը:

Գործողություն 2.8. Մասնավոր հատված-պետություն համագործակցության միջոցով վերապատրաստման հնարավորությունների ընդլայնում

Խնդիր 3. Շրջանավարտների մրցունակության բարձրացում և իրացման հնարավորությունների ընդլայնում

ՆՄՄԿՈՒ և բուհերի շրջանավարտների մասնագիտական իրացման կարևոր գործիքներ են կարիերայի կենտրոնները, որոնք օգնում են ոչ միայն աշխատանք գտնելիս, այլև կարիերայի պլանավորման գործում: Կարիերայի ուղղորդման կենտրոններ ստեղծվել են ՆՄՄԿՈՒ բոլոր հաստատություններում, որոնք ունեն հստակ մեթոդաբանություն և գործառնություններ: Թեպետ բուհերը ևս ունեն կարիերայի ուղղորդման կենտրոններ, սակայն հստակ չեն դրանց գործառնությունը, մեթոդաբանությունը, հետևապես նաև արդյունքները: Մինևույն ժամանակ զբաղվածության տարածքային կենտրոնները ևս մատուցում են կարիերայի ուղղորդման խորհրդատվություն, ինչը հաճախ արդյունավետ չի լինում: Բացի այդ՝ կարիերայի կենտրոնների հետևողական աշխատանքի արդյունքում հնարավոր է ստանալ շրջանավարտների կարիերայի հետազոծի վերաբերյալ օգտակար տվյալներ՝ դրանք օգտագործելու քաղաքականությունների մշակման ժամանակ:

Գործողություն 3.1. Բուհերի կարիերայի կենտրոնների գործունեության սկզբունքների վերանայում

Գործողություն 3.2. Մասնագիտական կրթության բոլոր օղակներում շրջանավարտների անհատական գործերի ստեղծում և միասնական շտեմարանի գործարկում

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՄ

ՆՊԱՏԱԿ 2. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

Խնդիր 1. Զբաղվածության արդյունավետ և հասցեական ծրագրերի մշակում

Միջազգային փորձի ուսումնասիրությունը տալիս է այն հարցի պատասխանը, թե որոնք են աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության ամենարդյունավետ մոտեցումները, ըստ որի՝ լավագույն արդյունքը տալիս են անմիջական օժանդակությունը աշխատանք փնտրելիս և մարդկային կապիտալի զարգացումը: Մյուս կողմից՝ նվազ արդյունավետ են աշխատանքի սուբսիդավորման ծրագրերը, մինչդեռ Հայաստանում վերջինիս օրինակները բազմաթիվ են: Կարիք կա վերանայելու առկա ծրագրերը, ընդլայնելու դրանցից արդյունավետների ծավալները և մշակելու նոր ծրագրեր: Գործընթացն ընթանալու է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Ծրագրերի ընտրության ժամանակ հաշվի է առնվելու յուրաքանչյուր ծրագրի վրա ծախսված գումարի արդյունքում տնտեսության համար ստեղծված հավելյալ արժեքի չափը:

Գործողություն 1.1. Զբաղվածության ծրագրերի՝ ըստ ուղղությունների պահանջարկի ուսումնասիրություն և առաջարկությունների փաթեթի մշակում

Գործողություն 1.2. Զբաղվածության առկա ծրագրերի արդյունավետության գնահատում և լրամշակում

Գործողություն 1.3. Զբաղվածության նոր ծրագրերի մշակում, արդյունավետության գնահատում և ամբողջական իրականացում

Գործողություն 1.4. Զբաղվածության ծառայություններում աշխատանք փնտրողների և գործազուրկների հետ սոցիալական աշխատանքի իրականացման, նրանց կարիքների գնահատման նոր համակարգի ներդրում և գործարկում

Գործողություն 1.5. Զբաղվածության ծրագրերի իրագրելման տեղեկատվական արշավի իրականացում

Խնդիր 2. Զբաղվածության ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնման նորարարական լուծումներ

Զբաղվածության ծառայությունների մատուցման արդյունավետության տեսանկյունից կարևոր դեր կարող են խաղալ ժամանակակից տեխնոլոգիական լուծումները, որոնք հնարավորություն կտան առցանց եղանակով ծանոթանալու աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի հիմնական միտումներին, առանց ժամանակ ծախսելու և բյուրոկրատական քաշքշուկքների փնտրելու աշխատանք կամ աշխատողի, ինքնաշխատ եղանակով կազմելու ինքնակենսագրական, ծանոթանալու զբաղվածության ոլորտում առաջարկվող ծրագրերին,

անցնելու առցանց դասընթացներ և այլն: Համացանցի լայն հասանելիությունը և խելացի հեռախոսների տարածվածությունն անհրաժեշտ է օգտագործել զբաղվածության խթանման նպատակով: Հաշվի առնելով, որ աշխատանք փնտրողների համար զբաղվածության ծառայությունների մատուցման ներկայիս ձևը մի շարք պատճառներով գրավիչ չէ՝ առաջարկվող նոր լուծումները թույլ կտան ներգրավելու առավել մեծ թվով մարդկանց: Այդ նպատակով առաջարկվում է ստեղծել առցանց նոր հարթակ, որը հնարավորություն կտան մեքենայական ուսուցման և այլ ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ապահովելու աշխատանք փնտրող-գործատու կապը և հստակ թիրախավորելու զբաղվածության առաջարկվող ծրագրերը:

Գործողություն 2.1. Զբաղվածության առցանց հարթակի մշակում

Գործողություն 2.2. Զբաղվածության պետական գործակալության շրջիկ գրասենյակների ներդրում

Խնդիր 3. Զբաղվածության ծառայություն մատուցողների կարողությունների զարգացում

Զբաղվածության ոլորտի քաղաքականության արդյունավետության նախապայմաններից է քաղաքականության մշակման և իրականացման մարմինների ներքին գործընթացների օպտիմալացումը՝ առկա ռեսուրսներով հնարավոր լավագույն արդյունքին հասնելը, միաժամանակ մասնագիտական և ինստիտուցիոնալ կարողությունների բարձրացումը, այդ թվում՝ ժամանակակից տեխնոլոգիաների և նորարական մեթոդների կիրառման միջոցով: Խնդրահարույց է հատկապես տվյալների առկա շտեմարանների և ներքին համակարգերի ոչ արդի լինելը:

Գործողություն 3.1. ԶՊԳ տեղեկատվական ներքին համակարգի արդիականացում

Գործողություն 3.3. Զբաղվածության ոլորտի ծառայություններ մատուցող աշխատողների վերապատրաստում

ՆՊԱՏԱԿ 3. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՄԵԾԱՑՈՒՄ

Խնդիր 1. Զբաղվածության խթանում ՀՀ բոլոր տարածաշրջաններում

Տնտեսական ակտիվության ու գործազրկության ցուցանիշները տարբերվում են ինչպես մարզային, այնպես էլ քաղաքային ու գյուղական բնակավայրերի կտրվածքով: Ըստ այդմ՝ յուրաքանչյուրում գործազրկությունը պայմանավորված է որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարածաշրջանային պատճառներով: Պատահական չէ, որ օրինակ՝ զբաղվածության պետական ծրագրերը սովորաբար մարզերում թերակատարում են ունենում, քանի որ հաճախ հաշվի չեն առնվում տարածաշրջանային առանձնահատկությունները: Ուստի կա անհրաժեշտություն յուրաքանչյուր տարածաշրջանի համար զբաղվածության, տնտեսական զարգացման խթանման առանձնահատուկ քաղաքականության և ծրագրի մշակման, ինչը հնարավոր է տվյալ տարածաշրջանի տնտեսության կառուցվածքից բխող համապատասխան ենթակառուցվածքների զարգացման միջոցով:

Գործողություն 1.1. Յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական, սոցիալական կառուցվածքի, մարդկային կապիտալի և զարգացման ներուժի գնահատման ուսումնասիրություն

Գործողություն 1.2. Քարտեզագրման հիման վրա անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում

Խնդիր 2. Նպաստների համակարգի առաջացրած շահադրդման փոփոխություն

Նպաստների համակարգը պետք է միտված լինի նաև նպաստառուի համար կայուն եկամուտ ապահովելուն: Այդ նպատակով 2019 թ. փետրվարի 26-ին ՀՀ վարչապետի N 180-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մինչև ս.թ. նոյեմբերի 30-ը ներկայացնելու է բարեփոխումների կոնկրետ առաջարկներ:

2014 թվականից Հայաստանում դադարեցվել է գործազրկության նպաստի տրամադրումը, և ամբողջությամբ անցում կատարվեց աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունների իրականացմանը, որոնց ծավալները, սակայն, հնարավորություն չեն տալիս օժանդակելու բոլոր գործազուրկներին՝ նվազեցնելով զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվելու մոտիվացիան: Ուստի նպաստների վերանայման գործընթացում հնարավոր է նաև դիտարկել աշխատանքի ապահովագրության համակարգի կիրառումը:

Գործողություն 2.1. Նպաստների համակարգի նոր մոդելի մշակում և ընդունում

Գործողություն 2.2. Նպաստների համակարգի նոր մոդելի վերաբերյալ սոցիալական աշխատողների վերապատրաստումների անցկացում

Խնդիր 3. Թիրախային խմբերի ներառում զբաղվածության ծրագրերում

Հայաստանի աշխատաշուկայում ինտեգրվելը դժվար է հատկապես երիտասարդների համար: Հետազոտությունները փաստում են, որ երիտասարդների 62%-ի համար կրթությունից հետո մշտական աշխատանք գտնելու համար երկու տարի է պահանջվում:¹² Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների՝ 2018 թ. 15-34 տարեկան երիտասարդները կազմում են աշխատանքային ռեսուրսների 37%-ը, որից տնտեսապես ակտիվ է ընդամենը 53%-ը: Մինևույն ժամանակ, գործազուրկների մեջ երիտասարդների մասնաբաժինը կազմում է 45%: Այդուհանդերձ, զբաղվածության պետական ծառայությունները հազվադեպ են թիրախավորում երիտասարդներին: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատաշուկայում ինտեգրման տեսանկյունից տարիքային խմբերից ամենախոցելի են հենց երիտասարդները, ովքեր նաև տնտեսության զարգացման շարժիչ ուժն են, անհրաժեշտ է վերանայել զբաղվածության պետական ծրագրերն ու դրանց թիրախավորումը:

Գործողություն 3.1. Երիտասարդներին ուղղված զբաղվածության նոր ծրագրերի մշակում և իրականացում

¹² ILO, 2014, Labor market transition for young women and men in Armenia

Ջրաղվածության բոլոր ցուցանիշները վկայում են զբաղվածության գենդերազգայուն քաղաքականության և ծրագրերի մշակման անհրաժեշտության մասին: Մասնավորապես՝ համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների՝ 2018 թ. դրությամբ կանայք կազմում են հանրապետության աշխատանքային ռեսուրսների 55%-ը, որից տնտեսապես ակտիվ է ընդամենը 47%-ը: Խնդրահարույց է հատկապես այն փաստը, որ Հայաստանում կանայք ավելի մեծ ներգրավվածություն ունեն մասնագիտական կրթական հաստատություններում, ուստի պետությունը մարդկային կապիտալի զգալի կորուստ է ունենում: Տնտեսապես ոչ ակտիվ կանանց մեջ մեծ է հատկապես երիտասարդ կանանց տեսակարար կշիռը՝ 38%, ինչը պայմանավորված է կանանց սոցիալական դերով, այդ թվում՝ երեխայի խնամքի պարտականությամբ, սոցիալ-մշակութային պատճառներով և այլն: Պատահական չէ, որ մեծ պահանջարկ ունեն պետության կողմից մատուցվող այնպիսի ծառայությունները, որոնք հնարավորություն են տալիս կանանց համատեղելու երեխաների խնամքը ուսման կամ աշխատանքի հետ: Այդուհանդերձ, հաշվի առնելով առկա խնդիրները և ելնելով կանանց համար մասնագիտական ինքնաիրացման հնարավորություններն ընդլայնելու անհրաժեշտությունից՝ պետությունը կարիք ունի մշակելու գենդերազգայուն զբաղվածության քաղաքականություն՝ անդրադառնալով այնպիսի հարցերի, ինչպիսիք են մանկահասակ երեխայի և տարեցների խնամքի կազմակերպումը, ծառայությունների որակը և հասանելիությունը, ավելի ճկուն աշխատանքային գրաֆիկի հնարավորության ընձեռումը և այլն:

Գործողություն 3.2. Կանանց՝ աշխատաշուկայում ինտեգրվելու համար նոր ծրագրերի մշակում և իրականացում

Գիտությամբ ապացուցված է, թե որքան առանցքային է 18-20 տարիքային հատվածը երիտասարդի մարդկային կապիտալի զարգացման տեսանկյունից: Մյուս կողմից էլ՝ միջազգային փորձը հարուստ է փաստական տվյալներով, որոնք վկայում են պարտադիր զինվորական ծառայության՝ մարդկային կապիտալի զարգացման ու զբաղվածության վրա ունեցած ազդեցության մասին: Ընդ որում՝ այդ ազդեցությունը կարող է լինել ինչպես բացասական, այնպես էլ դրական՝ կախված ծառայության ընթացքում զինծառայողներին մատուցված դասընթացների կառուցվածքից և որակից: Ուստի, պետության զարգացման տեսանկյունից կարևոր է, որ հատկապես ապահովվի պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում զինծառայողների մարդկային ու սոցիալական կապիտալի զարգացումը, նրանց ներգրավմամբ՝ ռազմարդյունաբերության զարգացումը, այդ թվում՝ մասնագիտական ստորաբաժանումներում ընդգրկելու միջոցով, ինչպես նաև պահեստազոր արձակվող պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների նախապատրաստումը քաղաքացիական կյանքին՝ զբաղվածության համապատասխան ծրագրերում ընդգրկվելու ճանապարհով:

Գործողություն 3.3. Առաջնագծում մարտական հերթապահության մեջ չընդգրկված զորամասերում ժամկետային զինծառայողների համար փորձնական ծրագրերի նախագծում և իրականացում

Գործողություն 3.4. Զորամասերում հասարակական ակտիվի ձևավորմամբ տեղեկատվական-խորհրդատվական կետերի ստեղծում և մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցության ցուցաբերում ու պահեստազոր արձակվելուց (զորացրվելուց) հետո վերջիններիս ընդգրկում զբաղվածության ծառայություններում

ՆՊԱՏԱԿ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Խնդիր 1. Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման և վերահսկողության բարելավում

Աշխատանքային հարաբերությունների ինստիտուցիոնալ հիմքը ՀՀ Աշխատանքային օրենսգիրքն է, որը թեպետ պարբերաբար փոփոխությունների է ենթարկվում, սակայն, պայմանավորված հասարակական-տնտեսական հարաբերությունների զարգացմամբ և մի շարք դրույթների հստակեցման անհրաժեշտությամբ՝ գործող իրավական դաշտի վերլուծության և ըստ այդմ՝ փոփոխությունների ներկայացման անհրաժեշտություն կա, որի արդյունքում աշխատանքային իրավունքները կդառնան ավելի պաշտպանված՝ միաժամանակ չնվազեցնելով աշխատանքային հարաբերությունների ճկունությունը:

Իրավական դաշտի վերլուծությունը թիրախավորելու է նաև աշխատանքային օրենսդրության և իրավական ակտերի նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մեխանիզմների զարգացման հնարավորությունը:

Գործողություն 1.10. Գործող իրավական դաշտի վերլուծություն

Գործողություն 1.2. Աշխատանքային օրենսգրքի և աշխատանքային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի վերանայում, փոփոխությունների ներկայացում և ընդունում

Գործողություն 1.3. Աշխատանքային հարաբերությունների պետական վերահսկողության համակարգի ինստիտուցիոնալ զարգացում

Խնդիր 2. Արհմիությունների ինստիտուտի դերի բարձրացում

Աշխատանքային պայմանների բարելավման ամենակարևոր գործոններից մեկը ոչ միայն արդյունավետ Աշխատանքային օրենսգրքի առկայությունն է, այլև օրենքների կիրարկումն ապահովելը: Սահմանափակ ռեսուրսների պատճառով պետությունը չի կարող արդյունավետ կերպով հետևել յուրաքանչյուր տնտեսվարողի կողմից աշխատողների իրավունքների երաշխավորված պաշտպանությանը, մինչդեռ դրա լավագույն երաշխիքներից է գործուն արհեստակցական միության առկայությունը, որի առաքելությունն աշխատողների շահերի և իրավունքների ներկայացումը և պաշտպանությունն է կոլեկտիվ բանակցությունների և այլ գործիքակազմով: Հաշվի առնելով պետության խորհրդային անցյալը՝ գործող ոչ բոլոր արհմիություններն են արդյունավետ կերպով իրականացնում օրենքով սահմանված իրենց գործառույթը, թեպետ առկա են նաև ինքնակազմակերպման դրական օրինակներ: Միաժամանակ օրենսդրական լիազորությունների բացակայության պատճառով՝ գործող արհմիությունները չեն կարող լիովին և պատշաճ ձևով ներկայացնել և պաշտպանել աշխատողների շահերն ու իրավունքները:

Գործողություն 2.1. Արհմիությունների կոնֆեդերացիայի և ճյուղային արհմիությունների ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում

Գործողություն 2.2. Արհմիությունների մասին օրենքի լրամշակում և ընդունում

Գործողություն 2.3. Արհմիությունների կոնֆեդերացիայի և ճյուղային արհմիությունների կարողությունների զարգացում

Գործողություն 2.4. Արհմիութենական շարժումը խթանող միջոցառումների իրականացում

Խնդիր 3. Աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում

Աշխատանքային իրավունքների պաշտպանության կարևոր նախապայմաններից է աշխատանքային օրենսգրքի դրույթների կամ նորմերի մասին քաղաքացիների իրազեկվածության բարձր մակարդակը: Այդուհանդերձ, պարզ չէ ներկայումս բնակչության իրազեկվածության մակարդակը, քանի որ այդ նպատակով հարցումներ չեն անցկացնում: Հարցումների բացակայությունը խոչընդոտում է ոլորտի մասին հստակ պատկերացում ունենալը և ըստ այդմ քաղաքականություն մշակելը:

Միաժամանակ, աշխատանքային հարաբերություններում կողմերի իրավունքների և պարտականությունների պաշտպանության համար խնդրահարույց է նաև օրինակելի աշխատանքային պայմանագրերի բացակայությունը:

Գործողություն 3.1. Աշխատանքային օրենսգրքի վերաբերյալ ուղեցույցի մշակում, ընդունում և դրա առցանց հասանելիության ապահովում

Գործողություն 3.2. Աշխատանքային պայմանագրերի գեներացման առցանց համակարգի ստեղծում

Գործողություն 3.3. Պաշտոնների և զբաղմունքների միասնական դասակարգչի առցանց համակարգի ներդրում

Գործողություն 3.4. Աշխատանքային հարաբերությունների և պայմանների մասին իրազեկվածության բարձրացման միջոցառումների կազմակերպում

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈՒԾՈՒՄՆԵՐ

ՆՊԱՏԱԿ 5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Խնդիր 1. Զբաղվածության փաստահենք քաղաքականության մշակման համար պահանջվող տվյալների հավաքագրում և վերլուծություն

Կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության և զբաղվածության ոլորտներում փաստահենք քաղաքականության իրականացման անհրաժեշտություն կա, ինչի համար պահանջվում է մի շարք շտեմարանների թարմացում և/կամ փոխգործելիության ապահովում, ինչը հնարավորություն կտա գնահատել անձի մարդկային կապիտալի զարգացման ողջ հետազիծը՝ սկսած հանրակրթությունից: Նման վերլուծությունների բացակայությունն անդրադառնում է հատկապես կրթության ոլորտում կատարվող ծախսերի արդյունավետության վրա, ինչպես օրինակ՝ պետական պատվերի տեղերի հատկացման ժամանակ: Մինչդեռ կանխատեսումների առկայությունը կբացահայտի շուկայում աշխատուժի հոսունության միտումները, կոնկրետ մասնագիտությունների գծով պահանջարկի ու առաջարկի միջև անհամապատասխանությունը՝ հնարավորություն ստեղծելով շտկելու պետական քաղաքականությունը և արագ արձագանքելու շուկայի ազդանշաններին:

Առկա չեն համապարփակ հետազոտություններ կամ այնպիսի տվյալներ, որոնք հնարավորություն կտան խորքային ուսումնասիրել կառուցվածքային գործազրկության պատճառները: Ստեղծվելիք տվյալների շտեմարանները հնարավորության կտան կանխատեսումներ իրականացնել մի քանի տարվա կտրվածքով: Այդուհանդերձ, քանակական ցուցանիշներից բացի անհրաժեշտ է որոշակի պարբերությամբ որակական ուսումնասիրությամբ պարզել առկա անհամապատասխանության պատճառները՝ անդրադառնալով կրթական և ուսումնական ծրագրերին, և ըստ այդմ մշակել քաղաքականության հնարավոր սցենարներ:

Գործողություն 1.1. Մարդկային կապիտալին առնչվող շտեմարանների միջև փոխգործելիության ապահովում

Գործողություն 1.2. Մարդկային կապիտալի վերլուծության համար անհրաժեշտ բացակայող տվյալների հավաքագրում

Խնդիր 2. Զբաղվածության ոլորտի քաղաքականությունների և ծրագրերի ներդաշնակեցում և համակարգում

Ներկայումս զբաղվածության ոլորտին առնչվող ծրագրեր մշակում և իրականացնում են բազմաթիվ պետական գերատեսչություններ, զարգացման գործընկերներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: Որոշ դեպքերում ծրագրերը համընկնում են, այլ դեպքերում տարբեր ծրագրերի միջև բացակայում են օրգանական կապերը, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ ունենալ ավելի մեծ արդյունք:

Գործողություն 2.1. Զբաղվածության ոլորտի առկա և ստեղծվելիք ծրագրերի քարտեզագրում

Գործողություն 2.2. Ոլորտին առնչվող քաղաքականություններ մշակողների միջև մշտական հաղորդակցման ընթացակարգի մշակում և կիրառում

Խնդիր 3. Զբաղվածության ոլորտի քաղաքականություններ մշակող ինստիտուտների մարդկային կարողությունների զարգացում

Զբաղվածության ծրագրերի արդյունավետության բարձրացման և փաստահենք քաղաքականությունների մշակման համար առանցքային է քաղաքականությունների մշակման գործընթացում ընդգրկված հանրային և քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատումն ու ըստ այդմ՝ մարդկային կարողությունների և հմտությունների զարգացումը:

Գործողություն 3.1. Մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստումների իրականացում

Խնդիր 4. Զբաղվածության ոլորտի քաղաքականությունների հաղորդակցման ապահովում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2018 թ. գործազուրկների միայն 4.3%-ն է դիմել Զբաղվածության պետական ծառայություն: 2015 թ. աշխատաշուկայի պետական կարգավորման ծրագրերում ներառված է եղել գործազուրկների ընդամենը 5%-ը:¹³ Ծառայության կողմից արձանագրվել են բյուջեի թերակատարումներ: Խնդրահարույց է նաև ծառայության հետ համագործակցող մասնավոր ընկերությունների քանակը: Ուստի անհրաժեշտություն կա բրենդավորելու մատուցվող ծառայությունները և բարձրացնելու դրանց տեսանելիությունը, հանրությանը իրազեկելու զբաղվածության ոլորտում իրականացող զարգացումներից, առաջարկվող ծառայություններից և առկա հնարավորություններից:

Գործողություն 4.1. Ոլորտի հաղորդակցման գործողությունների ծրագրի մշակում

Գործողություն 4.2. Ոլորտի զարգացումների վերաբերյալ հանրային իրազեկման արշավների իրականացում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

¹³ ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ ՊՈԱԿ, 2016, «2015 թվականի զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի և նրանում ներառված զբաղվածության ծրագրերի մոնիթորինգի և գնահատման գործընթաց»

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ
«ԱՇԽԱՏԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Իտդիր	Արդյունք	Ցուցանիշ	Հենանիշ	Թիրախ	Գնահատման աղբյուրը	Ժամկետ	Բյուջե	Կատարող Համակատարող
ՆՊԱՏԱԿ 1. Կրթական գործընթացում մասնավոր հատվածի արդյունավետ ներգրավվածությամբ որակյալ կրթության ապահովում և երիտասարդների մրցունակության բարձրացում								
Իտդիր 1. Կրթության ինստիտուցիոնալ և բովանդակային արդիականացում	Կրթական գործընթացի արդյունքն արդիական է և համարժեք աշխատաշուկայի կարիքներին	Մասնագիտական կրթական հաստատությունների շրջանավարտների՝ կրթությունն ավարտելու և աշխատանք գտնելու միջակայքային միջին տևողությունը	Ենթակա է գնահատման 2019 թ. համար	Տևողության կրճատում առնվազն 40%-ով	ՀՀ վիճակագրական կոմիտե	2023		ՀՀ ԿԳՄՄՆ ՀՀ ԱՄՀՆ
Գործողություն 1.1. Մասնագիտությունների ցանկի վերանայում և կրթական ծրագրերի արդիականացում	Մասնագիտությունները և ծրագրերը/պետական կրթական չափորոշիչները համապատասխանում են ժամանակակից պահանջներին	1. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան վերանայված ՆՄՄԿՈՒ մասնագիտությունների թիվը բոլոր մասնագիտությունների մեջ 2. Վերանայված ՆՄՄԿ պետական կրթական չափորոշիչների թիվը բոլոր ՆՄՄԿ չափորոշիչների մեջ 3. Վերանայված մասնագիտությունների կշիռը բոլոր մասնագիտությունների մեջ 4. Վերանայված ծրագրերի կշիռը բոլոր ծրագրերի մեջ	Ենթակա է գնահատման 2019 թ. համար	Տարեկան ՆՄՄԿ 10 պետական կրթական չափորոշիչ	ՀՀ ԿԳՄՄՆ հաշվետվություններ	2021 թ.	19,380 մլն ՀՀ դրամ	ՀՀ ԿԳՄՄՆ ՀՀ ԱՄՀՆ ՀՀ ԷՆ
Գործողություն 1.2. Կրթական ծրագրերի ներկայացման ազգային հարթակի ստեղծում	Երիտասարդները տեղյակ են մասնագիտական կրթական ծրագրերից և դրանց գրանցած հաջողություններից, և կրթական համակարգի կողմից կրթական ծառայությունների գրավչությունն էապես աճել է	1. Առցանց հարթակի առկայություն 2. Հարթակի օգտատերերի քանակ	1. 0 2. 0	1. 1 2. Տարեկան առնվազն 10000 մասնակից	ՀՀ ԿԳՄՄՆ հաշվետվություններ	2022 թ.	20 մլն. ՀՀ դրամ	ՀՀ ԿԳՄՄՆ
Գործողություն 1.3. Բուհերի ուսանողների հորիզոնական	Բուհերի ուսանողները կարողանում են մասնակցել իրենց	1. Մշակված փորձնական կարողանում են 2. Ծրագրերի մասնակիցների	1. 0 2. 0 3. 0	1. Առնվազն 2 ծրագիր 2. Առնվազն 40 ուսանող 3. Առնվազն 60%	ՀՀ ԿԳՄՄ նախարարության հաշվետվություններ	Մեկնարկ՝ 2021 թ.	2 մլն. ՀՀ դրամ	ՀՀ ԿԳՄՄՆ Զարգացման գործընկերներ

մոբիլությանն ուղղված նախաձեռնությունների մշակում և փորձնական իրագործում	հետաքրքրող և մասնագիտական զարգացում ապահովող դասընթացներին՝ անկախ ուսուցման վայրից	քանակ 3. Ծրագրերից գոհունակության աստիճան		գոհունակություն				
Գործողություն 1.4. Մասնագիտական կրթության համակարգում հետավար կրթության համակարգի և ընտրված մասնագիտություններով կրթական մոդուլների մշակում և ներդրում	Մասնագիտական կրթությունը հասանելի է	1 Հետավար կրթության իրականացման համար առցանց հարթակի ստեղծում, շահագործում 2. Հետավար կրթությամբ մշակված ծրագրերի քանակը 3. Հետավար կրթության համակարգ ներդրած ուսումնական հաստատությունների թիվը	1. չկա 2. 0 3. 0	1. ստեղծված է 2. Հետավար կրթությամբ մշակված մինչև 15 ծրագիր 3. Հետավար կրթության համակարգ ներդրած թվով 7 ուսումնական հաստատություն	ՀՀ ԿԳՄՄՆ հաշվետվություններ	2021 թ.	13 մին ՀՀ դրամ	ՀՀ ԿԳՄՄՆ ՀՀ ԲՏԱՆ
Գործողություն 1.5. Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի համատարած ներդրում	Մասնագիտական կրթության հարցում պատասխինքը կատարում են իրազեկված ընտրություն	1. Մասնագիտական կողմնորոշում իրականացնող վերապատրաստված մանկավարժների թիվ 2. Մասնագիտական կողմնորոշման կենտրոն ունեցող դպրոցների թիվ 3. մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն ստացած աշակերտների թվաքանակը ընդհանուր թվաքանակի մեջ տեսակարար կշիռը, % տվորողների ընդհանուր թվաքանակում 4. Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն ստացած՝ բոլոր ընդունվածների տեսակարար կշիռը, % տվորողների ընդհանուր թվաքանակում 5. Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն ստացած՝ հետագա կրթության ընթացքում մասնագիտությունը փոխած ուսանողների կշիռ, % տվորողների մեջ	Ենթակա է գնահատման 2019 թ. համար	Կսահմանվեն երակետային ցուցանիշների ստացումից հետո	ՀՀ ԱՄՀՆ հրապարակումներ	2023 թ.	-	ՀՀ ԱՄՀՆ ՀՀ ԿԳՄՄՆ
Գործողություն 1.6. Կրթության դերի վերաբերմունքն ուղղված սոցիալական	Հանրության մոտ կրթությունն արմատավորված է որպես իրավունք և կայուն	1. Սոցիալական արշավների թիվը 2. Սոցիալական արշավների ծածկույթը 3. Դրական արձագանքման	1. 0 2. 0 3. 0	1. Տարեկան առնվազն 6 արշավ 2. Առնվազն 10000 մասնակից	ՀՀ ԿԳՄՄՆ հաշվետվություններ	2021 թ.	25 մին ՀՀ դրամ	ՀՀ ԿԳՄՄՆ Զարգացման գործընկերներ

արշավներ	ապագայի երաշխիք	տոկոսը		3. Առնվազն 5000 հավանումներ սոցիալական ցանցերում				
<p>Գործողություն 1.7. Կանավորության ինստիտուտի զարգացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումների մշակում և ներդրում</p>	<p>Կանավորությունը բոլոր տարիքներում դիտարկվում է որպես սոցիալականացման կարևոր միջոցներից մեկը</p>	<p>Կանավորություն իրականացրած անձանց թվաքանակի աճ</p>	<p>Ենթակա է գնահատման 2019 թ. համար</p>	<p>Տարեկան աճ առնվազն 10%-ով</p>	<p>ՀՀ վիճակագրական կոմիտե</p>	<p>2020 թ. երկրորդ</p>	<p>3 մլն ՀՀ դրամ</p>	<p>ՀՀ ԱՄՀՆ ՀՀ ԿԳՄՄՆ</p>
